

ՊԱՏՄԱՆ-ՀԵՆՐԻԿՆԻՍԿԻՍ ԳՐԱԴԱՐԱՆ




ՍՏԱԼԻՆԸ
ՅԵՎ
ՀԱՇԻՄԸ

087.1

U-90

ՊԵՏՐՈՍ



1914 (mirrored text, likely bleed-through from the reverse side)



Faint red handwritten text or markings on the left page.


10 AUG 2005

087.1

U-90

ՊԱՏՄԱ-ՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1 DEC 2009



Ի. Վ. Սալիեր (ընկեր Սոսոն) 1901 թվին:

Ս Տ Ա Լ Ի Ն Ը

Յ Ե Վ

Հ Ա Շ Ի Մ Ը

ՄԻ ՔԱՆԻ ՄԻՋԱԳԵՂ ԲԱԹՈՒՄՅԱՆ ԸՆԴՀԱՏԱԿԻՑ

Ռուս. բարգմանեց՝ ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԱՆ

13317

Պ Ե Տ Ն Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1938

49637-65



843
39

1179-611

Բաթումիի ծայրամասերում փոփել են Ֆաբրիկաներ, գործարաններ ու բանվորական ավաններ: Նրանց ընդհուպ սեղմվել են աջարների և արխաղների գյուղերը: Մեր նկարագրած ժամանակաշրջանում ամենամեծ գործարանը Բաթումիում Ռոտշիլդի «Բնիտո» գործարանն էր, վորտեղ աշխատում էին մինչև 6 հազար բանվոր: Սաչատուրյանցի գործարանում աշխատում էին հազար յերկու հարյուր մարդ. Մանթաշեփների յերկու գործարաններում կային չորս հազար, մի շարք այլ մանր գործարաններում՝ մինչև յերկու հազար բանվոր: Բացի այդ, ծովափնյա աշխատանքներում զբաղված էին մինչև յերեք հազար բանվոր: Նրանց ճնշող մեծամասնությունը, բացի տեղացի աջարներից, պանդուխտ գյուղացիներ էին՝ յեկած Գուրիայից, Մինգրելիայից, Իմերեթիայից և Աբխազիայից: Շատ կային նաև ուղաններ, հայեր և այլն: Իրանք չքավոր գյուղացիներ էին, վորոնք իրենց տնտեսական ծանր դրությունը թեթևացնելու հույսով յեկել էին գործարանները:

Բանվորները սովորաբար բնակություն էին հաստատում Բարցխանի և Գորոգոլի*) շրջաններում: Բայց քանի վոր բանվորների թիվը շարունակ աճում էր, իսկ բանվորական ավանների տարածությունն

*) Բաթումիի ծայրամասերը:

ավելի ու ավելի նեղանում եր, քաղաքի «հայրերն» սկսեցին լրջորեն մտահոգվել, թե քաղաքի շրջագծից դուրս փորտեղ հնարավոր կլինի բնակեցնել բանվորներին իրենց ընտանիքներով:

Բարցխանից և Գորոդոկից հեռու, քաղաքի հակառակ ծայրամասում, կար ճահճային մի մեծ հողամաս, փորը կրում եր իրեն արժանի «Չաոբա»*) անունը: Այդ, յեթե կարելի յե ասել՝ «հողերը» սկսեցին վաճառել սաժենը մեկ կոպեկով: Միանգամայն հասկանալի յե, փոր այդպիսի «եժանությունը» չքավորությունից ուժասպառ յեղած բանվորներին ստիպում եր կառչել քաղաքի չինովնիկներին «հողատար» ձեռքով մեկնած ծղոտից:

Այդ ճահիճներում «հավի փոտների վրա» սկսեցին բարձրանալ տներ, փորոնք հետզհետե կազմեցին մի մեծ բանվորական ավան:

Այդ յերեք բանվորական ավաններին՝ Գորոդոկին, Բարցխանին և Չաոբային բոլորովին մոտ ընկած են Մախմուդիա, Ֆերիա, Ֆեզիա, Մալբաուրի, Անկիսա և Կախաբերի գյուղերը: Այդ գյուղերի բնակիչների մի մասը հարկադրված եր գնալ Փաբրիկաները, գործարաններն ու ծովափնյա աշխատանքի՝ մի կողմից մշակման համար ազատ հողերի բացակայության պատճառով, իսկ մյուս կողմից՝ չքավորության պատճառով:

Այդպիսով, բանվորների և գյուղացիների սերտ կապն ու համախմբվածությունը հիմնվում եյին փոչ միայն նրանց տերիտորյալ մոտիկության, այլև տնտեսական գրեթե միանման վիճակի վրա:

Յե՛վ յերբ այդ ընչազուրկ պրոլետարական մաս-

*) Վրացերեն նշանակում է ճահիճ:

սայի մեջ գցվեց առաջին հեղափոխական սերմը, այն արագությամբ սկսեց ծլել ու աճել:

Բանվորական ավաններից սկսեց փորոշակի և կտրուկ լավել իրավագրկությունից՝ և քաղցից վերդովված պրոլետարիատի ձայնը, իսկ նրա հետևից խոսեց նաև գյուղացիությունը: Յե՛վ փորքան իշխանությունն ավելի յեռանդով եր աշխատում խլացնել աճող հեղափոխական զժգոհությունը, այնքան ավելի յեր ամբանում բանվորների և գյուղացիների դասակարգային ինքնագիտակցությունը:

Այդ խմորումը հետզհետե սկսեց ընդունել փորոշակի ձևեր: 1897 թ. Բարցխանում կազմակերպվեց առաջին անլեզալ սոցիալ-դեմոկրատական խմբակը, իսկ մի քանի տարի անց՝ Բարցխանի խմբակի նման խմբակների զարգացման զուգընթաց Կախաբերի գյուղում աճեց գյուղացիական հեղափոխական մի խմբակ, փորը կապ ունեւ Միդլիբիդիսի, Մանթաշևի և Սաչատուրյանցի գործարանների հեղափոխական բանվորների հետ:

1897—1901 թվականների շրջանում Բարցխանի խմբակի փոքրաթիվ լինելը նրան թույլ չեւ տալիս լայնորեն ծավալել իր աշխատանքը, փորը կրում եր զլիսավորապես պրոպագանդիստական բնույթ:

Սովորաբար տոն օրերին Բարցխանում կանաչապատ մի հրապարակում բանվորները հավաքվում եյին և այնտեղ կազմակերպում զբոսանք, խաղեր, պարեր և այլն: Այդ զբոսանքներից պրոպագանդիստներն ոգտվում եյին ամենաառաջավոր բանվորների առանձին խմբերի հետ զրույցներ անցկացնելու համար:

Այդ խմբակի գոյության մասին փոստիկանությունը գիտեր, բայց «բռներ» նրան հանկարծակի,

քաղաքական անմիջական աշխատանքի պահին, — այդ նրան չէր հաջողվում: Հենց վոր վորեւ տեղ յերեւելում եր վոստիկանական մի պաշտոնյա, անմիջապես զրուցող խմբերն սկսում եյին պարել և գնդակ խաղալ: «Պարերը» ղեկավարում եր Բարցխանի խմբակում աշխատող, պարերի ուսուցիչ Իվլիան Շապատափան: Զվարճությունները անմեղությունը վոստիկանությանը համոզում եր, վոր «հակաորինական» վորեւ բան չկա:

Յերբեմն գնդակախաղը վոստիկանության ներկայութեամբ ընթանում եր այնպիսի յեռանդով և «ցուցադրական» կերպով, վոր գնդակը կաշում եր վոստիկանների գլխին և այդ ել ավելի յեր համոզում վերջիններին հավաքի անմեղության մեջ:

1901 թվի վերջին Թբիլիսիից Բաթումի յեկավայն ժամանակ ղեռն միասնական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներից մեկը, ընկեր Սոսո Զուղաշվիլին (Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը), վորին հանձնարարված եր Բաթումի կազմակերպության ընդհատակյա աշխատանքի ղեկավարությունը:

Ընկեր Սոսոն, ինչպես նրան անվանում եյին հեղափոխական բանվորները, բնակություն հաստատեց Բաթումիում, Թիֆլիսյան փողոցում, Մանթաշեվի գործարանի բանվոր Զխայիձեյի բնակարանում:

Ծանոթանալով Բարցխանի խմբակի աշխատանքներին՝ ընկեր Սոսոն այդ խմբակի անդամ Իվլիան Շապատափայի հետ զրուցելիս ասաց.

— Զեզ մոտ աշխատանքը շատ դանդաղ ե գնում, մինչդեռ հարկավոր ե այնպես անել, վոր հեղափոխական շարժումը, վորքան հնարավոր ե, արագորեն զարգանա:



Ընկեր Ստալինը Բաթումիում 1901 թվին ղեկավարում և աշխատանքի խմբակը՝ Եկաթից 9. Բուսիբեկի պարից:

Աշխատանքն սկսելով՝ ընկեր Սոսոն առաջին հերթին գործի ներգրավեց Բարցխանի խմբակի անդամներին: Ոգտվելով բանվորների հետ ունեցած նրանց կապից՝ ընկեր Սոսոն սկսեց իր կողմը գրավել բանվորների նորանոր խմբեր, նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին առաջադրանք տալով՝ իրենց մոտ, Ֆաբրիկայում կամ գործարանում, ագիտացիա մղել վստահելի բանվորների շրջանում և նրանց ներգրավել ընդհատակյա կազմակերպության աշխատանքի մեջ:

Մանթաշեվի, Ռոտշիլդի, Սիգիբրիգիսի և այլ գործարանների բանվորների ներկայացուցիչներից կազմված առաջին նեղ ժողովը՝ կայացավ ընկեր Սոսոյի ղեկավարությամբ: Այդ ժողովում, ինչպես պատմում է ընկեր Կոտրիկաձեն, ընկեր Սոսոն ասում էր.

— Ինձ, ընկերներ, ձեզ մոտ են ուղարկել Թբիլիսիի բանվորները, վորպեսզի զրուցեմ ձեզ հետ: Թբիլիսիի բանվորները, ինչպես հայտնի յե ձեզ, զարթնել են քնից և պայքարի յեն պատրաստվում իրենց թըշնամիների դեմ: Իսկ Բաթումիի բանվորները դեռ հանգիստ քնած են: Կոչեմ անում ձեզ՝ հետևել Թբիլիսիի բանվորների օրինակին և նրանց հետ միասին ձեռք-ձեռքի տված գնալ ընդհանուր թշնամիների դեմ:

Յերկրորդ գաղտնի ժողովը տեղի ունեցավ Զխալիձեյի բնակարանում: Այդ արդեն ավելի բազմամարդ ժողովում ընկեր Սոսոն ասում էր.

— Մկսած Մանթաշեվից ու նրա գործակատարներից և վերջացրած վոստիկաններով, — բոլորն ել մեր տերերն են, այն ել այնպիսի տերեր, վորոնց հարկավոր է, վոր մենք շատ աշխատենք, քիչ ուտենք և ել ավելի քիչ խոսենք այն մասին, թե մենք կա-

րիք ենք զգում ուտելու: Ահա հենց այդ տերերի դեմ մենք պետք է պայքարենք, վորպեսզի բանվորները կարողանան ազատ խոսել իրենց կարիքների մասին:

— Շատ հաճախ, — պատմում է այդ ժողովին մասնակցողներից մեկը՝ Պ. Իոլիբաձեն, — մենք լրսում եյինք, թե ինչպես ընկեր Սոսոն հիշատակում էր Լենինի անունը: Լենինի անունը Սոսոյի մոտ անխղճիորեն կապված էր այն խոսակցությունների հետ, վոր նա ունենում էր հեղափոխության գործի մեջ նորանոր հուսալի բանվորներ ներգրավելու մասին:

— Մեզ հարկավոր է մասսա, — ասում էր ընկեր Սոսոն, — և միմիայն մասսա: Առանց նրան մեզ մոտ վոչինչ չի դուրս գա:

Ընկեր Սոսոյի խոսքերը շուտով գործնականում արդարացան. Ֆաբրիկաներում և գործարաններում կազմակերպվում եյին քաղաքական խմբակներ, բանվորական մասսան ամբողջությամբ հեղափոխականանում էր և նկատելի յեր, վոր մոտենում են անցքեր, վորոնք խոստանում եյին ծավալվել վորպես լայն գործադուլային շարժում:

1901 թվականին «Բնիտո» գործարանում բանվորների կողմից առաջին անգամ տնտեսական պահանջներ առաջադրվեցին:

Ընկեր Սոսոյի ընդհատակյա աշխատանքի մասին վոստիկանությանը հայտնի դարձավ: Այդ հանգամանքը նրան հարկադրեց ժամանակավորապես փոխադրվել Գորոգոկ, Սիլիբիսարո Լոմշարիայի տունը: Մակայն, քանի վոր այստեղ մնալը ևս լիովին անվտանգ չեր և ընկեր Սոսոն հարկադրված էր

շարունակ ԼոմՂարիայի տնից բոչել Ալանիայի տու-
նը և ընդհակառակը, ուստի նա ստիպված էր մի
ավելի ապահով ապաստարան գտնել վոչ միայն իր,
այլև ընդհատակյա տպարանի համար, վորն խոյզ
ժամանակ գտնվում էր կազմակերպման շրջանում:

Մանթաշեվի գործարանում գործող խմբակը
Իլլարիոն Դարախվելիձեյին և Իվլիան Շապատավա-
յին հանձնարարեց զբաղվել այդպիսի բնակարան
փորոնելու գործով:

Նոր առաջ յեկած բանվորական ավան Չաորան
ղեռ վոստիկանության կասկածանքի տակ չէր գրա-
նրվում: Շատ ընկերներ այդ վերագրում էին չայն
հանգամանքին, վոր ավանի անանցանելի ջրափոսերով
ձամբորդելն այնքան էլ զուր չէր գալիս վոստիկա-
նական պաշտոնյաների սրտին:

Բանվորական այդ ավանում գտնվում էր մի
տուն, վոր պատկանում էր յերկու տիրոջ. այդ
տան կեսը, — վոր բաղկացած էր յերեք սենյակից
և վորոնց մեջ ապրում էր Իվլիան Շապատավան
իր կին Դեսպինա Շապատավայի հետ, — պատկա-
նում էր Նիկո Նացվալային: Մյուս կեսը, վոր պատ-
կանում էր Մատո Ռուսիձեյին և բաղկացած էր
նույնպես յերեք սենյակից, ազատ էր: Իլլարիոն
Դարախվելիձեն, վորին Շապատավայի հետ միասին
հանձնարարված էր ընկեր Մտալինի համար բնակա-
րան գտնել, ինքն էլ էր բնակարանի կարիք զգում,
և Մանթաշեվի գործարանի խմբակում վորոշվեց,
վոր այդ բնակարանն իրենց անունով վարձեն յեղ-
բայրներ Իլլարիոն և Դարիսպան Դարախվելիձեյները,
իսկ ընկեր Սոսոն ընդհատակյա տպարանի հետ մի-
ասին այնտեղ կտեղավորվի անլեզալ կերպով: Դա-
րախվելիձեյ յեղբայրներն զբաղեցրին յերկու սե-



Ընկեր Ստալինը 1902 թվին կազմակերպում է Թվիլիսիի յեկավաթուղարանի բանվորները գործադուլը: Նկարից նույնպիսի կապակցություններ չկան:

նյակը, իսկ մի շաբաթ հետո ընկեր Սոսոն տեղափոխվեց յերրորդ սենյակը: Շուտով այնտեղ փոխադրվեց նաև ընդհատակյա տպարանը: Ընկեր Սոսոյի հետ գրեթե միաժամանակ Դարախփելիձենների սենյակներում տեղավորվեց նաև այն ժամանակվա հեղափոխական աշխատողներից մեկը՝ Կոցիա Կանգելակին:



Կոցիա Կանգելակի—Իսթումիի բանվոր:

Այն պահից, յերբ ընկեր Սոսոն տեղափոխվեց Դարախփելիձենների բնակարանը, սկսվում է ել ավելի ծրագրված, համառ, յեռանդուն և բուռն աշխատանք: Հեղափոխական շարժման գործի մեջ գիտակից բանվորների ավելի ու ավելի մեծ կազմեր են ընդգրկվում, ծավալվում է քաղաքական խմբակների ցանցը, բանվորական լայն մասսաների մեջ արմատանում է դասակարգային ինքնագիտակ-

յուլթյունը: Ընկեր Սոսոն գրեթե ամեն գիշեր իր բնակարանում ընդհատակյա խմբակների ղեկավարների և ակտիվի ժողովներ է գումարում:


Այդ ժողովներում մշակվում և նախապատրաստում էյին բանվորների քաղաքական յելույթների, բանթողների և գործադուլների կազմակերպման վերաբերյալ հարցերը: Ժողովից հետո մինչև լուսաբաց ընկեր Սոսոն իր հավատարիմ ողնական գրաշար Գեորգի Թելիայի հետ միասին ընդհատակյա տպարանում թուուցիկներ եր տպագրում:

Գործարանային ադմինիստրացիայի ամեն մի ճնշում բանվորների վրա, գործարանատերերի շահերը պաշտպանող իշխանության յուրաքանչյուր յելույթ մերկացվում էր ընկեր Սոսոյի տպագրական գազզյահի տակից գուրս յեկող թուուցիկներում: Այդ թուուցիկները հուզում, ալեկոծում էյին բանվորներին, զարթեցնում նրանց դասակարգային ինքնագիտակցությունը, առաջ էյին բերում տաք և բարձրաձայն խոսակցություններ այն մասին, վոր հարկավոր է հրապարակորեն հայտարարել իրենց իրավունքների մասին, առաջադրել իրենց տնտեսական և իրավական պահանջները և ստիպել ձեռնարկատերերին՝ բավարարել դրանք:

Դեպքերը չստիպեցին յերկար սպասել իրենց:

Մանթաշեվի գործարանի բանվորները հունվարի 31-ին բողոքի գործադուլ հայտարարեցին գործարանի կառավարիչի արարքների դեմ:

Վոստիկանությունը ձերբակալեց ավելի քան հարյուր բանվորի: Բայց բանվորներն ամուր էյին կանգնած, գործադուլը շարունակվեց ավելի քան յերկու շաբաթ և վերջացավ բանվորների հաղթանակով. — հեռացվեց գործարանի կառավարիչը, հետ



Բաթումիի աքսորականների կազարմաների առջևի հրապարակը, փորտող 1902 թվի մարտի 9 - ին, ընկեր Ստալինի ղեկավարությամբ, տեղի ունեցավ բանվորների քաղաքական ցույցը:

ընդունվեցին բոլոր արձակված բանվորները, վճարվեց գործադուլի ժամանակվա աշխատավարձը և այլն:


Հենց այդ ժամանակ Ռոտշիլդի գործարանում աշխատանքից արձակեցին յերեք հարյուր ութսուն յերկու հին բանվորների, փորոնք համարվում եյին «քաղաքականապես անբարեհույս»: 1902 թվականի մարտի մեկին գործարանի բանվորները գործադուլ հայտարարեցին և ընկեր Սոսոյի ղեկավարությամբ գործարանային վարչությանը ներկայացնելու համար մշակեցին մի շարք պահանջներ, փորոնք թվում պահանջներ կային նաև արձակված բանվորներին հետ ընդունելու և ութժամյա բանվորական օր սահմանելու մասին:

1902 թվականի մարտի 7 - ին Տաճկական շուկայի հրապարակում Բաթումիի բանվորական շարժ-


49637-65

(843 / 39)

(1179-67)



Բաթումիի բանվորների 1902 թվի ցույցն ընկեր Ստալինի ղեկավարությամբ: Եկարիչ Ե. Կուստեյովիկի նկարից



ման պատմութեան մեջ առաջին անգամ տեղի ունեցավ բանվորների վեցհազարանոց միտինգ, վորտեղ բացահայտ կերպով քննարկվում էին բանվորների պահանջները: Միտինգը ցրվեց կազակների կողմից: Գործադուլի հետեւանքով ձերբակալվեցին մինչև հարյուր բանվոր:

Հետեւյալ ուրը, մարտի 8-ին, ընկեր Սոսոն կազմակերպեց բողոքի մի ազդու ցույց, պահանջելով արձակել ձերբակալված բանվորներին:

Մինչ այդ Բաթումիում չտեսնված՝ բանվորների կազմակերպված մասսան հեղափոխական կոչերով շարժվեց դեպի մարզային բանտը: Այդ դեպքն այնքան անսպասելի դուրս յեկավ իշխանութեան համար, վոր բանտը տանող ճանապարհի վրա ցույցը վոչ վոք չկասեցրեց, իսկ պոստերում կանգնած փոստիկանները թագնվեցին դարպասների հետեւում: Յեւ յերբ ցուցարարներն արդեն բոլորովին մոտեցել էին բանտին, միայն այն ժամանակ իշխանութեանն ուշքի յեկավ և ամբողջ ցույցը շրջապատվեց հեծյալ կազակների սեղմ ողակով:

Ինչ վոր մի ձևով ցուցարարներն իմացան, վոր ձերբակալված բանվորները մարզային բանտում չեն, այլ գտնվում են աքսորականների կազարմաներում:

Չնայած կազակների ողակին, բանվորները հանգիստ շուռ յեկան բանտից և ուղղվեցին դեպի աքսորականների կազարմաները: Կազակների ողակն ուշադրութեանը սրած, ցուցարարներին շրջապատած շարժվեց նրանց հետ միասին: Բանվորները հասկացան, վոր կազակները ցանկանում են ամբողջ ցույցը քշել աքսորականների կազարմաների բակը և շատերը սկսեցին հետ մնալ ցուցարարներից: Այդպիսով, յերբ ցույցը մոտեցավ աքսորականների

կազարմաներին, նրա շարքերում մնացին ընդամենը չորս հարյուրից-հինգ հարյուր մարդ, վորոնք պահանջում էին ազատել ձերբակալվածներին, կամ ձերբակալել նաև իրենց բոլորին: Կազակները խորամանկութեամբ նրանց քշեցին աքսորականների կազարմաները և փակեցին այնտեղ:

Փակվածների թվումն էր նաև Իվլիան Շապատավան, բայց նրան, վորպես քաղաքում հայտնի պարերի ուսուցչի և վոչ մի բանում չկասկածված մարդու, կալանքից ազատ արձակեցին (այդպես էր պատմում ինքը՝ Իվլիան Շապատավան):

Տուն վազելով Իվլիանը հայտնեց ընկեր Սոսոյին.

— Քանի վոր այդպիսի դժբախտութեան պատահեց, կնշանակի վոստիկանութեանն իսկույն հայտնի կդառնա մեր տպարանի տեղը: Հարկավոր է տպարանն այտեղից անմիջապես հեռացնել, այլապես մենք բոլորս կկործանվենք:

Ընկեր Սոսոն դրան պատասխանեց.

— Մենք նորից ցույց կկազմակերպենք, վորպեսզի ազատենք աքսորականների կազարմաներում փակված չորս հարյուր հիսուն բանվորներին, իսկ տպարանի մասին դու շատ մի անհանգստանա. այդպես շուտ նրա վրա չեն հարձակվի:

Մարտի 9-ի առավոտյան յերեք հազարից ավելի բանվորներ նորից ցույցի դուրս յեկան: Ազմկաձայն զահավիժող ճյան հյուսի նման բանվորները խուժեցին դեպի աքսորականների կազարմաները: Առջևից գնում էին ընկերներ Սոսոն և Գերոնտի կալանդաձեն:

Կազարմաներին ընդհուպ մոտեցած բանվորներին հանդիպեցին զինվորների սվինները, կապիտան Անտաձեյի հրամանատարութեամբ: Ցուցարարների մեջ

քիչ մնաց շփոթութիւն ընկներ, բայց այդ վայր-
կյանին բազմութեան գլխին հնչեց ընկեր Ստալինի
ձայնը.

— Զինվորները չեն կրակի մեզ վրա, իսկ նրանց
հրամանատարներին մի վախենաք: Խփեցեք ուղիղ
նրանց գլխներին և մենք կհասնենք մեր ընկերների
ազատ արձակմանը:


Բազմութիւնը մոնչաց և սպառնալից շարժվեց
կազարմաների կողմը:

— Ազատեցեք մեր ընկերներին, կամ թե մեզ
եւ նստեցրեք նրանց հետ, — լսվում էին բանվոր-
ների ազադակները:

Բայց կապիտան Անտաձեն հրաման տվեց՝
«կրակել»: Յե՛վ չնայած շատ զինվորներ կրակում
էին դեպի վեր, համենայն դեպս տասնչորս բանվոր
սպանվեցին և քառասունից ավելին վիրավորվեցին:

Այդ վայրենի և արյունալի դատաստանը փոքրի
հանեց ամբողջ Բաթումին, փորը ցարական արբա-
նյակների այդպիսի գործողութիւններին պատաս-
խանեց ընդհանուր գործադուլով: Իսկ արյունահեղ
գնդակահարութեան գոհերի թաղումը վերածվեց
հսկայական միտինգի, փորակեղ յելույթ ունեցող
ընկերներն անարգանքի սյունին ելին գամում և
ցարական կառավարութեանը, և՛ կապիտալիստ տե-
րերին:

Մարտի 9-ի դեպքերը Բաթումիի բանվորների
դասակարգային ինքնագիտակցութեան լուսավոր-
ման գործում հսկայական դեր խաղացին: Ընկեր
Սոսոն այդ դեպքերն ոգտագործեց բանվորների մեջ
սոցիալիզմի գաղափարների պրոպագանդը խորաց-
նելու և ծափալելու համար, բանվորների կազմակերպ-
ման գործն ավելի ամուր հիմքերի վրա դնելու



Ընկեր Ստալինը կազմակերպում է Բազմի բանվորներին՝
Նկատ՝ Միգալոն նրխամի:

և բանվորներին ավելի սերտորեն կուսակցութեան զբոշի շուրջը համախմբելու համար:

Աքսորականների կազարմաներում փակված չորս հարյուր հիսուն բանվորները շուտով արտրվեցին Բաթումից: Սակայն արյունալի դատաստանին ակնանատես այդ գուրիացի, մինգրելցի, իմերեթցի և այլ բատրակ ու հողագուրկ գյուղացիներն իրենց հետ հայրենիք տարան նաև մարտի 9-ի դեպքերի մասին ընկեր Սոսոյի ձեռքով գրած և Բաթումիում հրատարակված թուղթիկները և արևմտյան Վրաստանի գյուղերում տարածեցին հեղափոխական «վարակը», վորն այստեղ բարենպաստ հող գտավ իրեն համար: Իրանից հետո շուտով սկսվեցին գյուղացիական բացահայտ հուզումները կալվածատերերի և կառավարութեան դեմ:

Հեղափոխական կազմակերպութեանը մեծ կորուստներ ունեցավ, բայց մարտի 9-ի զոհերը չքայքայեցին մարտիկների շարքերը, այլ, ընդհակառակը, նրանց ավելի կուռ համախմբեցին:

Այդ նշանավոր ցույցից հետո վոստիկանութեանը գտավ ընկեր Սոսոյի հետքը:

Այդ այսպես պատահեց: Ցարական գնդակներով վիրավորվածների մեջ էր նաև ընկեր Սոսոյի հետ միասին ցույցին ներկա յեղած Գերոնտի Քալանթաձեն: Նա վիրավորված էր ձեռքից: Ուշադրութեան չդարձնելով զրույթյան վտանգավոր լինելուն, ընկեր Սոսոն Գերոնտիին կառք նստեցրեց և տարավ Չաոբա, իր բնակարանը: Վոստիկանութեանը չկարողացավ մինչև վերջ հետևել, թե ընկեր Սոսոն Գերոնտիին հատկապես վիր տուներ տարավ, այնուամենայնիվ դեպի ընկեր Սոսոյի բնակավայրը տանող հետքերը մասամբ գտնված էին:

Ընկեր Սոսոն հասկացավ այդ: Իարախվելիձե յեղբայրներին և այդ տան բոլոր ապրողներին՝ նա խորհուրդ տվեց տուն վերադառնալիս մտնել զանազան բակեր և այդպիսով խճճել իրենց հետքերը:

Հեղափոխական կազմակերպութեան անդամները հսկում էին վոստիկանութեան գործողութեաններին. դրա շնորհիվ յերկու շաբաթից հետո պարզվեց, վոր վոստիկանութեանը հայտնի յեն թե ընդհատակյա տպարանի տեղը և թե ընկեր Սոսոյի բնակարանը, և վոստիկանութեանը միայն հարմար վայրկյանի յե սպասում, վոր տպարանը գրավի աշխատելու ժամանակ:

Իվլիան Շապատովան առաջարկութեան արեց՝ չկորցնել վոչ մի բոպե, տպարանը փոխադրել մի ուրիշ ավելի ապահով տեղ: Բայց ընկեր Սոսոն դրան չհամաձայնեց:

— Վոչինչ, — ասաց նա, — այսոր չեն գա, իսկ վաղը ժամանակ կունենանք տպարանը թագցնելու: Իսկ յես, ասենք, այստեղից վոչ մի տեղ չեմ գնալու:

Այդ ամբողջ ուրը և ամբողջ գիշերը մինչև լույս ընկեր Ստալինն անընդհատ աշխատում էր տպարանում: Միայն հետեվյալ ուրը, յերբ արդեն անհրաժեշտ քանակութեամբ թուղթիկները պատրաստ էին, ընկեր Սոսոն զբաղվեց տպարանն ուրիշ, ավելի ապահով տեղ, փոխադրելու գործով:

Սոուկ-Սուի գերեզմանատունն ընկած է Գորոդոկից Մախմուդիա գյուղը տանող ճանապարհի վրա: Գերեզմանատան պահակն էր Իլլարիոն Կաչախմաձեն, վորը Բաթումիի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան անդամ էր: Ընդհատակյա հեղափոխական աշխատանքում այդ գերեզմանատան խաղացած դերի մասին Կաչախմաձեն պատմում է հետեվյալը.

Մարտյան արյունալի դեպքերից վոչ շատ առաջ, 1902 թվականի փետրվարին մի անգամ ինձ մոտ յեկավ Սիլիբիատրո ԼոմՇարիան և հայտնեց, թե իրեն ուղարկել է Սոսո Ջուղաշվիլին, վորը ցանկանում է գերեզմանատանը գաղտնի ժողով հրավիրել:

Յես հասկացա, թե ինչ է պահանջվում ինձնից և նշանակված ժամին տվի այն բոլորը, ինչ հարկավոր եր: Գիշերը հորդ անձրև եր տեղում, բայց, չնայած զրան, ժողովը բազմամարդ եր: Ձեկուցումներով հանդես յեկան ընկեր Սոսո Ջուղաշվիլին և Կոցիա Կանդելակին: Յես այժմ արդեն չեմ հիշում, թե հատկապես ինչ եր խոսվում այդ ժողովում, բայց լավ հիշում եմ, վոր բանվորների առաջ հարց եր զրվում իրենց անտեսական պահանջները ձեռնարկատերերին առաջադրելու անհրաժեշտության մասին:

Այդ ժողովից հետո յես վեր կացա վորքան հնարավոր է վաղ, վորպեսզի գեանից հավաքեմ բանվորների թողած ծխախոտի մնացորդները: Իսկ մարդկանց հետքերը սրբել, լվացել եր անձրևը: Այդ որը ննջեցյալ պետք է բերեյին գերեզմանատուն և յես զբաղվեցի գերեզման պատրաստելով: Աշխատանքի ժամանակ ինձ մոտ յեկավ Գորոզոկի ավագ ստրածնիկը: Վախեցած և միաժամանակ սպառնալի ձայնով նա ինձ ասաց.

— Այստեղ, ինչպես յերևում է, յերեկ յերեկոյան ժողով է յեղել, իսկ դու վոչինչ չգիտես:

Ի՞նչ կարող եյի պատասխանել նրան: Միայն ասացի, վոր յես աշխատում եմ ցերեկը, իսկ գիշերվա մասին վոչինչ չգիտեմ:

Ստրածնիկը սաստիկ կատաղեց, սկսեց գոռո-



Անդեգալ ժողով Թբիլիսիի Խոջիվաճաքի գերեզմանատանը, Սոսոյի գեկուցումը: թվումը՝ Նկարիչ Ա. Գիգուկեալիու: Անարից

ուալ, բայց տեսնելով, վոր յես այդ բոլորի վրա ուշադրություն չեմ դարձնում և թիկունքս իրեն դարձրած շարունակում եմ փորել, բարկացած թքեց և հեռացավ»:

Փետրվարի վերջերին, մարտյան դեպքերի գրեթե նախորդակին, ընկեր Սոսոն միևնույն գերեզմանատանը մի անգամ ել գիշերային ժողով հրավիրեց, վորտեղ արդեն մանրամասնորեն մշակվում էր առաջիկա գործադուլի ծրագիրը:

Սոուկ-Սուկի գերեզմանատունը հեղափոխականների համար թագստոց էր աշխատանքի առանձնապես ծանր մոմենտներին:

Ապրիլին մի յերեկո գերեզմանատան դարպասների մոտ կանգ առավ մի կառք, վորի միջից դուրս յեկավ Կոցիա Կանդելակին և իր մոտ կանչեց Իլլարիոն Կաչախմաձեյին.

— Լսիր, Իլլարիոն: Ահա, այս տպարանը, — Կանդելակին ցույց տվեց կառքը, — քեզ ե ուղարկել մեր կազմակերպությունը, և դու պետք է այն լավ թագցնես:

Կառքի մեջ գտնվում էյին տառերով լի յերկու մեծ կճուճ և մի տպագրական դազգյահ: Իլլարիոնը կնոջն ոգնության կանչեց և նրանք միասին դազգյահն ու կճուճները տարան դեպի յեզիպտացորենի արտը, վորը գտնվում էր հենց այդտեղ, Կաչախմաձեյի բնակելի տան մոտ: Կառքն արագ անհայտացավ, տանելով Կոցիա Կանդելակին:

Իլլարիոնն արդեն գրեթե հասել էր յեզիպտացորենի արտին, յերբ հանկարծ նրա ալկանջին հասավ ձիերի վոտնաձայնը. տպագրական դազգյահը շալակին, Իլլարիոնը նստեց թփի յետեվը և տեսավ հեծյալ ժանդարմների մի խումբ, վորն արշավում

էր դեպի Գորոդոկ: Յերբ ժանդարմներն անցան, Իլլարիոնը վեր կացավ և ցանկացավ դազգյահը հեռու տանել, բայց այդ պահին նորից ձիերի վոտնաձայն լավեց: Իլլարիոնը նորից առանց դազգյահը շալակից իջեցնելու, թազնվեց թփի յետևում: Իրանք կազակներ էյին, վորոնք սրընթաց անցան գերեզմանատան մոտով: Ակնահայտ էր, վոր ժանդարմները և կազակները փորձում էյին Կոցիա Կանդելակին բռնել տպարանի հետ միասին:

Սոուկ-Սուկի գերեզմանատան ժամանակավոր թագստից տպարանը փոխադրվեց Սիլիբիստրո Լոմջաբիայի տունը: Սակայն պարզվեց, վոր այստեղ ել գրեթե հնարավոր չէ գոնե քիչ թե շատ հանգիստ աշխատել և թագցնել տպարանը: Վոստիկանները վխտում էյին ամբողջ Գորոդոկում: Կազմակերպության առաջ հարց բարձրացավ տպարանը վորքան կարելի յե հեռու տեղ թագցնելու ծայրահեղ անհրաժեշտության մասին, այն նպատակով, վորպեսզի ընկեր Սոսոն կարողանա առանց ընդհատման աշխատել տպարանում:

Կովկասյան հնազրական հանձնաժողովի արձանագրություններում մի փաստաթուղթ կա, վորտեղ ասված է.

«1830 թվականին վերջնական կախման մեջ ե դրված Աբխազիան»:

Այսպես անվրդով հանգստությամբ և լիտիությամբ էր գրում իր ղեկուցադրում ցարական սատրապը շատ տարիներ առաջ:

1830 թվականին Աբխազիայի պատմության մեջ մեծ անցք տեղի ունեցավ, վորն Աբխազիայի աշխատավոր ժողովրդի գլխին մեծ դժբախտություն բերեց:

Այնքան ել հասարակ, այնքան ել հեշտ ձևով
չե «կախման մեջ դրվում» մի ամբողջ յերկիր, վո-
րը դարե-դար պաշտպանել ե իր ազատութիւնը:
Յե՛վ այդ յերկիրն արյան ու արցունքի ծովի մեջ
վողողելով, իրենց ճանապարհն ազատասեր արխազ-
ների դիակներով ծածկելով միայն «հնազանդեց-
նողները» կարողացան «վերջնական կախման մեջ
դնել» Աբխազիան:

Յերբ հնագրական հանձնաժողովի արձանագ-
րութիւնները կազմվում եյին, հնազանդեցնողներին
թվում եր, թե Աբխազիայի նվաճման գործն իսկա-
պես կատարված ե վերջնականապես և հաստատուն
կերպով: Բայց այդ մասին բոլորովին այդպես չեյին
մտածում իրենք՝ արխազները:

Լեռներում յայնորեն տարածվեց արբեկու-
թիւնը—որենքից դուրս հայտարարված մարդկանց
հոսանքը: Մարդիկ արբեկներ դառնալով՝ բոլորովին
ել ավազակներ չեյին դառնում, ինչպես մտածում
եյին շատերը: Իրանք մարդիկ եյին, վորոնք չեյին
կարող տանել ցարական չինովնիկների և քրիստո-
նեական միսիոներների միջամտութիւնն իրենց
ներքին կյանքին, մարդիկ, վորոնք չեյին ցանկա-
նում հաշտվել անձի վրա գործադրվող բռնութիւն
հետ, բռնի մկրտութիւն հետ, ստրաժնիկների կամա-
յականութիւն հետ և այլն և այլն: Անհնազանդներն
սպանում եին չինովնիկներին, վոչնչացնում եյին
զինվորական մասեր, չեյին խնայում և միսիոներնե-
րին և փախչելով նվաճողների հետապնդումից՝ գնում
եյին սարերը, դառնում արբեկներ—որենքից դուրս
հայտարարված մարդիկ:

Կովկասի նվաճման և Աբխազիայի հեղափոխա-
կան շարժման պատմութիւն մեջ են մտել, վորպես

անմոռանալի եջեր, ցարական զորքերի և արխա-
զական գյուղացիութիւն միջև յեղած խոշոր ընդ-
հարումները: Այդ ընդհարումներից ամենախոշորը և
նշանակալիցը վերջացավ Լիխնիի*) հրապարակում
գնդապետ Կոնյարի գլխավորած կազակների բազ-
մամարդ ջոկատի կոտորածով: Իրանից առաջ գըն-
դապետ Կոնյարը հայտարարել եր ցարական «վողոր-
մած» որենքները, վորոնց յենթարկվելու վոչ մի
ցանկութիւնն չուներ առանց այն ել տանջված
բնակչութիւնը:

Ի պատասխան այդ դեպքերի՝ ցարական կառա-
վարութիւնը գործադրեց շտեմնված ճնշումներ,
վորոնք ստիպեցին արխազներին թողնել հայրենի-
քը և գաղթել Թիւրքիա:


1877 թվականին Աբխազիայի բոլոր կողմերից
դեպի ծովափ մեկնեցին արխազների մեծ խմբեր
իրենց ընտանիքներով, խղճուկ ունեցվածքով և
մի-մի բուռ հայրենի հողով՝ խնամքով փաթաթած
թաշկինակների և բաշլուղների մեջ: Ծովափին այդ
մարդկանց արդեն սպասում եյին թուրքական նա-
վերը, վորոնք առագաստների վրա ունեյին մեծ,
հրեղեն կիսալուսիններ:

Յե՛վ մահաջիրները**) գնացին ծովով: Գնացին
հալածականները՝ լավ որեր, լավ հող փնտռելու,
հանգիստ աշխատանքի համար:

Շատ հալածականներ միջոցներ չունենալով
հասնելու Թուրքիայում խոստացված հողերին, ծովի
վրա յերկարատե՛վ տանջանքներ կրելուց հետո ավ
հանվեցին Բաթումիում: Այստեղ արխազները սկըզ-
բում որավարձով աշխատում եյին ծովափին,

*) Լիխնի—Աբխազիայի այն ժամանակվա մայրաքաղաքը:

**) Մահաջիրներ—հալածականներ:



Հաշիմ Սմիրբա:

Իսկ հետո աջարացիները հետ միասին բնակութիւն հաստատեցին Բաթումի շրջակայքում, հիմնելով Մախմուդիա, Ֆերիա, Ֆեզիա, Սալիբաուրի, Անկիւսա և Կախաբերի գյուղերը:

Մախմուդիա գյուղում ապրում էր մի արխագ,

Հաշիմ Սմիրբա անունով: Նա մեկն էր հալածականներին:

Հարեւան գյուղացիները և քաղաքի շատ բանփորներ Հաշիմին ճանաչում էին փորպես ազնիվ և համարձակ մարդու: Յե՛վ դժվար բոպէյին հենց նրան զիմեց Բաթումի հեղափոխական կազմակերպութիւնը:

Հաշիմը քիչ էր հասկանում հեղափոխութիւնից, բայց յերբ Սիլիբիստրո Լոմշարիան յեկավ և գործի գրութիւնը բացատրելով ընկեր Սոսոյի և ընդհատակյա տպարանի համար թագստոց խնդրեց, Հաշիմն ասաց.

— Լավ:

Յե՛վ հենց այդ լերեկո ինքը՝ Հաշիմը, իր փորդի Հեմդիի և փեսա Ռեշերի հետ Լոմշարիայի տնից ձիով իր մոտ տեղափոխեց տպարանը, իսկ մյուս ուրը նրանց մոտ փոխադրվեց ընկեր Սոսոն:

Հաշիմի հարեւանները հաճախ էին տեսնում, թե ինչպէս նրա տունն էին գալիս չաղբայով ծածկված կանայք, բայց հարեւաններն առանց դժվարութեան հասկանում էին, փոր չաղբայի տակ թագնրվածները տղամարդիկ են: Գյուղացիները շատ էին մտածում, թե ինչո՞ւ Հաշիմի տունը շորերը փոխած տղամարդիկ են գալիս և ինչո՞ւ ինքը՝ Հաշիմը շատ հաճախ է տնից դուրս գալիս կանաչեղենով լի կողովը ձեռքին:

Չաղբայով ծածկված մարդիկ գրաշարներ էին, փորոնք ընկեր Սոսոյի հետ միասին աշխատում էին ընդհատակյա տպարանում, իսկ Հաշիմի կողովում, կանաչեղենի տակ, գտնվում էին հետաքրքիր բաներ:

Հաշիմը վոչ միայն իր մոտ թագցնում էր ընդհատակյա աշխատող հեղափոխական ընկեր Սոսոյին

և նրա տպարանը, այլ նա ամենայն բարեխղճութեամբ զբաղվում էր նաև այդ տպարանի արտադրանքը տեղափոխելով՝ ուր հարկն էր: Հաշիմը թուուցիկներն ու թերթիկները տարածում էր գյուղական բնակչութեան մեջ, բանփորութեան մեջ, յերբեմն էլ ընկեր Սոսոյի առաջադրանքով նույնը թարմ կաղամբի մեջ թագցրած տեղափոխում էր Փոթի և Ոգուրգեթի: Հաշիմը գործարաններում և ֆաբրիկաներում «մրգեղեն» երվաճառում և յերբ նրան մտանում էին այնպիսի գնորդներ, փորոնց նա անհուսալի յեր համարում, քրթննջում էր:

— Ալլան, ալլան: Ինձ պես ծերուկի գործը չե շալակով միրգ կրել, բայց անիծված աղքատութեան ստիպում ե:

Իսկ վատահելի գնորդների համար նա առանց ավելորդ խոսքի միրգը փաթաթում էր թուուցիկներում ու թերթիկներում:

Հաշիմի հարևանները շարունակում էին տարակուսել, թե այս ինչ է կատարվում ծերուկի մոտ: Չաղբայով գալիս են, չաղբայով գնում: Հաշիմը գրեթե ամեն ուր մրգի ու բանջարեղենի առևտուր է անում: Յեվ ծերունի հարեփանները թոթվում էին ուսները: Բայց յերբ նրանք իմացան, փոր Հաշիմի մոտ ինչ-փոր թղթեր են տպագրվում, հարցը փորոշեցին իրենց հասկացողութեամբ. — Կա չկա, Հաշիմի տանը թղթաղբամ են տպում, իսկ այդ մարդը, Սոսոն, անպայման զրամանենք ե: Ի միջի այլոց, հենց ինքը՝ Հաշիմն էլ մինչև թուուցիկների տարածման գործի մեջ ներգրավվելը, կարծում էր, թե ընկեր Սոսոն կեղծ թղթաղբամներ է տպագրում:

Յեվ ահա, մի յերեկո, յերբ ընկեր Սոսոն տանն

եր, Հաշիմի մոտ յեկան աջարացի ու աբխազ մի քանի գյուղացիներ: Խոսեցին տնտեսութեան մասին, մթերքների ու թանգութեան մասին, այն մասին, փոր իրենք քիչ փող ունեն, և յերբ խոսքը շուր յեկավ այդ կողմը, հանկարծ ընկեր Սոսոյին ուղղակի հարց տվին.

— Լսիր, Սոսո, դու լավ մարդ ես և լավ գործ ես կատարում: Յեվ մենք, չքավորներս, զգում ենք, փոր անկասկած շուտով ոգնութեան կատանանք քեզանից: Այ, դու ամբողջ գիշերներն աշխատում ես, տպագրում, իսկ արդյունքը ինչ-փոր չի յերեկում: Վերջապես յերբ պիտի գործի դնես քո փողերը:

Ընկեր Սոսոն լուռ ու յերկար նայեց գյուղացիների յերեսին և ապա ասաց.

— Ահա թե ինչ, ծերունիներ. յես ամենեվին էլ զրամանենք չեմ և փոչ մի կեղծ դրամ չեմ կտրում: Ոգնել ձեզ ձեր չքավոր վիճակում, ձեր ծանր պայմաններում — այդ իսկապես իմ նպատակն է, բայց միայն փոչ այնպես, ինչպես դուք եք կարծում: Յես տպագրում եմ փոչ թե փող, այլ թուուցիկներ, փորոնց մեջ գրում եմ. թե դուք ինչպիսի ծանր պայմաններում եք ապրում և թե ինչպես պետք է վերացնել այդ դժբախտութեանը: Յես ցանկանում եմ, փորպեսզի դուք բանփորների հետ միասին ցարին գրորեք իր բարձր գահից և ստեղծեք ձեր սեփական իշխանութեանը, փորպեսզի ինքներդ կարողանաք անորինել ձեր կյանքը և ձեր աշխատանքը:

Ծերունիները լուռ էին: Նրանք հարցական հայացքով իրար էին նայում: Իսկ հետո ներկաներից ամենատարիքավորն ասաց.

— Լավ, Սոսո, այն գործը, փոր դու կատարում ես, խորթ չե մեզ համար: Կեղծ դրամ կտրելու գոր-

ծում, իհարկե, մենք քեզ չեյինք ոգնի, վորովհետև
զրամի խնդրում բացի ծայրահեղ կարիք ունենալուց,
ուրիշ վոչ մի հասկացողութուն չունենք: Բայց այ,
յերբ դու ասում ես, վոր թագավորը խանգարում է մեզ
լավ ապրել, դրանից մենք շատ բան ենք հասկա-
նում և այժմ մեզնից ամենմեկը քեզ վատ ոգնահան
չի լինի: Մինչև այսոր քեզ թագցրել է միայն Հա-
շիմը. շնորհակալութուն նրան դրա համար, իսկ
այժմ մենք բոլորս կթագցնենք քեզ և քո աշխա-
տանքը, վորքան վոր ուժ ու շնորհք ունենանք:

Այդ ասելով ծերունիները գնացին:

Հաշիմի հետ մենակ մնալով, ընկեր Սոսոն նրան
ասաց.

— Հաշիմ, գուցե յես քեզ նեղութուն եմ տա-
լիս նրանով, վոր քո տանը կատարում եմ այնպիսի
աշխատանք, վորն իր հետեվից կբերի շատ բազմա-
պիսի հետեվանքներ: Գուցե դու չես ցանկանա, Հա-
շիմ, ինձ հետ միասին բանտ ընկնել, յեթե այդ տեղի
ունենա: Յես չեմ ուզում քեզ նեղացնել և, յեթե
ցանկանում ես, կհեռանամ քո տնից:

Հաշիմը յերկար ժամանակ լուռ քաշեց իր ծխա-
մորճը, համառ հայացքով նայեց ընկեր Սոսոյին,
և ապա ասաց.

— Գու, Սոսո, յերևի տեսած կլինես իմ բակում
յերկու զալում շներին: Մնա ինձ մոտ, այդ յերկու
շունը վոչ մի ոտար մարդու ներս չեն թողնի:

Հաշիմը ելի մի քիչ լուց և ապա հոգոց քաշեց.

— Լավ մարդ ես դու, Սոսո: Ափսոս, վոր մու-
սուլման չես:

— Իսկ ի՞նչ կլիներ յեթե յես մուսուլման լի-
նեյի, — հարցրեց ընկեր Սոսոն:

— Յեթե դու մուսուլմանութուն ընդունես,

քեզ կնության կտամ յոթ այնպիսի գեղեցկուհի-
ների, վորոնց նմանը յերեվի դու յերբեք չես տեսել:
Ուզում ես մուսուլման դառնար:

Ընկեր Սոսոն ժպտալով պատասխանեց.

— Լավ, — և սեղմեց Հաշիմի ձեռքը:

Այդ «լավ»-ը Հաշիմը մինչև մահ չկարողացավ
մոռանալ: Նա: չերհարող մոռանալ Սոսոյի այնքան
ուշադիր վերաբերմունքը դեպի նրա ծերունիական
հայացքները և վոր Սոսոն չճաղրեց մուսուլմանու-
թուն ընդունելու նրա առաջարկը: Արդեն յոթա-
նասունամյա ծերունի Հաշիմն այդ մասին շատ ան-
գամ եր պատմում իր վորդի Հեմդիին և արխազ
Մուստաֆա Ացանբային:

Մյուս որն, առավոտյան, Հաշիմն առույգ տրա-
մադրությամբ յեկավ ընկեր Սոսոյի մոտ:

— Վոչ մի բանից չվախենաս, — ասաց նրան,

— քո գործը շատ լավ կվերջանա:

— Ինչո՞ւ յե քեզ այդպես թվում, — հարցրեց
նրան ընկեր Ստալինը:

— Յերազ եմ տեսել, Սոսո: Յեվ գիտես ինչ-
պիսի յերազ: Յերազիս տեսա, վոր դու ամբողջ
Կովկասն ազատել ես ցարական զինվորներից և
իբր թե մեր բոլորիս կյանքը դարձել է այնքան
հեշտ, այնքան լավ և ազատ: Իմացած յեղիր, վոր
դա լավ յերազ է, Սոսո, շատ լավ յերազ:

Իր այդ յերազի մասին և այն մասին, վոր նա
այդ հաղորդեց ընկեր Ստալինին, Հաշիմը սիրում
էր պատմել բեռնակիր Մուստաֆա Ացանբային:

Մի անգամ գիշերն ընկեր Սոսոն նստած էր
Դարախվելիձեյի բնակարանում: Նրա հետ միասին
այնտեղ էր նաև Կոցիա Կանդելակին, նրանք զրու-

ցում եյին և չեյին ել կասկածում, վոր տան տակը լրտեսներ են նստած և լում են իրենց*):

Հանկարծ վոստիկանությունը ներխուժեց տուն և սկսեց խուզարկել: Բանից դուրս յեկավ, վոր ամբողջ տունը շրջապատված է վոստիկանության կողմից:

Վոստիկանները յերկար ժամանակ պրպտում եյին տան բոլոր անկյունները և առանձնապես վոչինչ չգտնելով՝ ձերբակալված հայտարարեցին Սոսոյին, Կոցիա Կանդելակիին և Դարախովելիձե յեղբայրներին: Ընկեր Սոսոն հանգիստ կանգնած եր պատուհանի մոտ, գլանակ եր ծխում և ընկերներին հանգըստացնում, ասելով, վոր այդ բոլորը դատարկ բաներ են և արժանի չեն առանձին ուշադրության **):

Այդ տեղի ունեցավ 1902 թվի ապրիլի 5-ին: Յերբ Ստալինը բանտումն եր, Հաշիմը մի քանի

*) Անդրկովկասի ցածրագիր վայրերում խոնավությունից խուսափելու համար ընդունված է տները կառուցել քարե բարձր սյուների վրա:

**) Ձերբակալությունից քիչ առաջ վոստիկանությունը խուզարկություն եր կատարել քաղաքի կոնսպիրատիվ բնակարաններից մեկում: Այն ժամանակ, յերբ առաջին սենյակներում խուզարկություն եր կատարվում, հետավոր սենյակներում գրտնըվում եյին մի քանի բանվոր հեղափոխականներ, վորոնց մեջ եր և Ստալինը: Իմանալով վոստիկանության գալու մասին և հասկանալով, թե ինչով կվերջանա այդ բանվորներից մի քանիսն առաջարկեցին ամբողջ մեղքը պեղ ընկեր Ստալինի վրա: Նույնն եր պնդում և ինքն ընկեր Ստալինը: Բայց ավելի գիտակից բանվորները բողոքեցին այդպիսի քայլի դեմ, ասելով. «Ի՞նչ, մենք կանայք ենք, ինչ և, վոր չկարողանանք փրկել կուսակցությանն անհրաժեշտ մարդուն»: Պատահեց այնպես, վոր վոստիկանությունը, սահմանափակվելով առաջին սենյակների խուզարկությամբ, հնուցավ: Այդ հանգամանքն ինքնըստինքյան լուծում տվեց վիճարանությանը:

անգամ փորձ արեց տեսակցություն ունենալ նրա հետ, բայց թույլ չեյին տալիս: Ընկեր Ստալինն իր կամերայի լուսամուտից հաճախակի տեսնում եր Հաշիմին, վորն անդադար թափառում եր բանտի շուրջը:

Չնայելով իր բոլոր ճիգերին, Հաշիմը չկարողացավ բանտի պատուհանի խավար լուսանցքով տեսնել Ստալինին:

Մի անգամ ընկեր Սոսոն ձայն տվեց նրան.

— Հաշիմ, Հաշիմ, ինչպե՞ս ես:

Միայն այն ժամանակ Հաշիմը նկատեց նրան և ձեռքով անելով պատասխանեց.

— Լավ, հեչ մի վախենա:


Յեվ դեռ յերկար ժամանակ կանգնած եր Հաշիմը, նայում եր լուսամուտին և համակրանքով գլխով անում կալանավորին:

Բաթումի բանտից ընկեր Ստալինին տեղափոխեցին Բուխարյի բանտը և նստեցրին այսպես կոչված Մեծ բանտի առաջին մեկուսարանում:

Քաղաքական կալանավորների նոր խմբի գալուց հետո ընկեր Ստալինը կազմակերպեց բանտային յելույթ:

Հուզումները բանտում այնքան մեծ չափերի հասան, վոր բանտ յեկան դատախազը, նահանգապետը և ուրիշ իշխանավորներ:

Ստալինին կանչեցին հարցաքննության, ուրճաամենայն հաստատակամությամբ և համառությամբ պաշտպանում եր քաղաքական բանտարկյալների առաջադրած պահանջները բանտային կյանքը բարելավելու մասին: Պահանջները բավարարվեցին. բանտարկյալները փոխադրվեցին մի մեծ կալանասենյակ, թույլատրվեց իրենց հաշիմն թափտեր ձեռք



Բախումի բանտի այն կամերան, վորի մեջ բանտարկված և յիզել ընկեր Ստալինը:

բերել, վորպեսզի հարկադրված չլինեն քնելու ցեմենտե հատակի վրա և այլն և այլն:

Ընկեր Ստալինը բանտում խմբակներ կազմակերպեց և սիստեմատիկ աշխատանք եր տանում պարզաբանելով կուսակցության ծրագիրը և բացատրելով, թե ինչպես պետք է կազմակերպել աշխատանքը գյուղացիության մեջ: Տասնվեցամսյա կալանքից հետո ընկեր Ստալինին յերեք տարով աքսորեցին Արևելյան Սիբիրի Իրկուտսկի նահանգի,



Գույր Ստալինը՝ անկեղալ վերադարձնող արտադատված Ստալինը, 1904 թվին: Նկարիչ Ա. Յիսուխուրիձեյի նկարից:

Քաղաքանի գավառի Նոր Ուզա գյուղը: Կալանա-
փորների կողմից ընկեր Ստալինին ճանապարհ դնելը
վերածվեց բոլոր բանտարկյալների մի նոր ցույցի:

Բաթումյան ընդհատակում անդորրութուն
սկսվեց: Ընկեր Սոսոյից հետո Անդրկովկասից աք-
սորվեցին հեղափոխական շարժման այլ ականավոր
դեկավարներ ևս:

Սակայն անդորրութունը յերկար չտևեց:

Աքսորավայրը հասնելուց մեկ ամիս անց, ար-
դեն 1904 թվականի հունվարին, Ստալինը փախավ
ադիսեղից և վերադարձավ Անդրկովկաս՝ անլեզալ
աշխատանքի:

Կուսակցութայն յերկրորդ համագումարում
պառակտումից հետո, Ստալինն առանց տատանման
կանգնեց Լենինի կողմը, բոլշեվիկների կողմը: Յեվ
ահա, մի անգամ ընկեր Սոսոն նորից հայտնվեց
Բաթումիում զինվորի հագուստով, Կոբա անվան
տակ: Նրա հետ զրեթե միաժամանակ Բաթումի
ժամանեց ականավոր մենշեվիկ Պետրեն (Նոյ Ռա-
միշվիլի): Չնայած հեղափոխականորեն դեռևս չհա-
սունացած բանվորների մեծամասնութունը մեն-
շեվիկ Պետրեյի (Նոյի) կողմը յեղավ, սակայն պայ-
քարում կոփված լավագույն բանվորները կանգնե-
ցին Ստալինի կողմը:

Սոսոն շրջում էր ֆաբրիկաներն ու գործարան-
ները և, ստուգելով բանվոր դասակարգի շարքերը,
ուշի ուշով հետեւում էր, թե ո՞վ փոր կողմն է հակ-
վում: Մի անգամ, գալով Մանթաշեվի գործարանը,
ընկեր Սոսոն մոտեցավ մենշեվիկորեն տրամազր-
ված բանվոր Պավլե Դոլիբաձեյին և հարցրեց.

— Մի՞թե, Պավլե, դու ել ես սկսել մենշեվիկի
պես դատեր:



Ընկեր Ստալինը 1905 թվին Չխաթուրի միախնդում մեղակացում և մենշեվիկների:

Ընկեր Սոսն անաշուց վորոշ բան արդեն լսել էր Պավլեյի տրամադրությունները մասին:

— Իմ ընկերները մեծամասնությունն այնտեղ է, դրա համար յես ել եմ նրանց հետ:

Ընկեր Ստալինը կշտամբանքով նայեց Գոլիբաձեյին և մտալլված ասաց.

— Այդ մեծամասնությունն ասածդ, ասենք, մեծամասնությունն ել չե իսկապես, այդ յես ասում եմ հեղափոխականների վորակի իմաստով: Իսկ առհասարակ, վոչինչ, կգա ժամանակ և դու կիմանաս, ով էր իրավացի և ով իրավացի չէր:

Յեզ կարուկ շուռ գալով՝ ընկեր Սոսնն դուրս յեկավ ցեխից:


Դեռ մինչև նրա գալը, լսելով կուսակցության պառակտման մասին, ընկեր Իլլարիոն Դարախովիձեն մի անգամ հարցրեց նախկին ընդհատակյա տպարանի գրաշար ընկեր Գյորգիին, թե նա ինչ է մտածում կուսակցության մեջ պատահածի մասին:

Ընկեր Գյորգին պատասխանեց.

— Հիմա յես վոչինչ չեմ կարող ասել քեզ, քանի վոր յես սպասում եմ Սոսոյի վերադարձին. իսկ յերբ նա գա, յես կերթամ այն գծով, ինչ վոր նա կասի, վորովհետև յես համոզված եմ, վոր Սոսնն չի սխալվի:

Այն ժամանակվանից ընկեր Ստալինը շարունակեց իր հեղափոխական գործունեությունն Անդրկովկասում, աշխատելով Թբիլիսիում, Բուխարխիում, Բազմում, Բաթումիում, Ճիաթուրիում, Ոգուրգեթի գավառում և այլ տեղեր: Ընկեր Ստալինը մենշևիկների դեմ գլխավոր ընդդիմախոսն էր, դաժան պայքար էր մղում մենշևիկների դեմ, հանուն բոլշևիկների գաղափարական գերիշխանության:

Բոլշևիկները վրաստանում և ամբողջ Անդրկովկասում ձևավորվեցին և աճեցին ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ. վորը դեռ այն ժամանակ էլ Անդրկովկասում բոլշևիկների ահանափոր տեսաբանն էր, վոզեշնչոյն ու կազմակերպիչը:



Ընդհատակյա տպարանի տպագրական դաղգյահը, վոր պահում էր Սմիրբանների ընտանիքը:

Բռնակեց 1914 թվականի համաշխարհային իմպերիալիստական սպանդը:

Մերունի Հաշիմ Սմիրբան ավելի լավ համարեց պատերազմի ընթացքում վերաբնակվել Աբխազիայում: Ընտանիքի հետ միասին լքելով իր ոջախը՝ Հաշիմը չմոռացավ ամբողջ տպագրական գույքը թաղել հողի մեջ և, այն ծածկելով խոնավ հողով, իր տղային ասաց.

— Առչինչ, Հեմդի, թող մնա այդ բոլորը: Յերեվի դեռ պետք կգա:

Հաշիմի տանը տեղավորվեցին զինվորներ: Մի անգամ այգում նկատելով թարմ հողաթումբ, նրանք կարծեցին, թե այդտեղ ինչ վորբան է պահ-

ված, գուցե և իրենց համար պետքական բան: Ձին-
վորները հանեցին տպագրական դազգյահը և տես-
նելով, վոր այդ իրենց համար վորևե բան չի ներ-
կայացնում, ցրիվ տվին այգու մեջ:

Վորոտաց հեղափոխությունը: Հաշիմը վերա-
դարձավ իր տունը: Հոգատար հայացքով դիտելով
իր հին այգին, Հաշիմը ցաք ու ցրիվ գտավ այն,
ինչ վոր ինքը մի ժամանակ խնամքով թագցրել էր:
Յերկար ժամանակ Հաշիմը խոտերի մեջ պրպտում
ու հավաքում էր ցաք ու ցրիվ տված տպարանի
առանձին մասերը: Յերբ բոլոր գտածները հա-
վաքեց մի տեղ, Հաշիմը կանչեց տղային:

— Նայիր, Հեմդի: Յերևի դու հիշում ես, թե
սա ինչ բան է: Սա այն է, վորն ոգնում էր հեղա-
փոխություն կատարելու: Լավ պահիր այդ բոլորը,
Հեմդի, և թող մնան դրանք, վորպեսզի նայելով այդ
յերկաթի կտորներին՝ յես կարողանամ վերհիշել
թանկագին Սոսոյին:

Պատ. խմբագիր՝ Մ. Գալթյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաբանյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե. Տ.-Մինասյան

Ելազ. լիազոր՝ Ա-4089. Հրատ. 4635.

Պատվեր 468. Տիրամ 5000.

Թուղթ. 62x94. Տպագր. 2³/₄ մամ.

Մեկ մամ. 24, 480 նշան.

Հանձնված է արտադրության 14 մայիսի 1938 թ.

Ստորագրված է տպագրության 28 ապրտոսի 1938 թ.

« Ազգային գրադարան »



NL0184283

49

W

16859

ԳԻՆԸ 1 ՌՈՒՐԼԻ

0

~~Handwritten scribble~~

Сталин и Хашим

Ինչ Արմ. ССР, Ереван, 1932 г.